Գիտական պարունակութեամբ այս տաղը ցոյց կուտայ որ Թորոս հետաքրքիր եւ ուսեալ էր։

Վստահօրէն իրըն է նաեւ յաջորդ տաղը, որ ոչ միայն նոյն ոճը ունի այլ եւ մեր այս ձեռագրին մէջ զետեղուած զ Թորոսի տաղերուն մէջ։

* * *

Ե

Երդ վ(ա)ս(ն) կ(ա)տ(ա)ր(ա)ծի աւուրն հնդեւասան նշանք
որ լինելոց է զկնի Նեռինն։

Քեզ ծանուցանեմ եղբայր ըս.
Որ լինելոց է յետ նեռանըն,
Նախ քան զգալուստըն ք(րիստոս)ի.
Որ զա փառօք ի (զա)տ(ա)ստ(ա)ն։

Եւ հընդեւասան նշան լինի.
Որ հիանան որդիք մ(ա)րդկ(ա)ն,
Ամ(ենայն) ազգք եւ երկրածինք.
Եւ կատարի այս ամենայն։

Նախ բարձրանա ծովն եւ կանկնի.
Քառասուն դիրկ ք(ա)ն զաստիճան,,
Ցերեսս երկրի ծայրակուտի.
Ո(ր)պ(էս) ջրոց ալեաց դիղան։

Ի յօրինակ ջրհեղեղին
Ո(ր)պ(էս) յառաջնարար նշան,
Սոյնպէս վերջին օրինակէ.
Որ մեղայ ծովն բարձրանան։

Եւ տատանի երկիր զոլով.
Ցորժ(ա)մ յայտնի զորձք ամ(ենայն).
Դ(ար)ձ(եա)լ ցածի եւ խոնարհի.
Իջումն խորս անդընթական։